բաղանի և ա՞ծապատիւ Տ՞ն Կոստանդեայ կաթողիկոսին ամենայն Հայոց», որ «ունէր և զդրասիրութիւն՞ շնորհս»։ ՏԵՂ, «յա՞ծապահ զղեակս Հռոմկլա, ընդ հուանեաւ (sic) սրբոյ Նշանիս Վանդոյ և սրբոյ տաճարացն, որ յանուն ս՞ը Փրկչին և սրբոյ Ա՞ծածնին և սրբոյն Գրիգորի լուսաւորչին և այլ բազմահաւաք սրբոցս, որ պաշտին ասա»։ ԺԱՄԱՆԱԿ. 1260 թ. փրկչական». յամի եւթն հարիւր և իններորդի թուաբերութե՞ս հայոց»։

Ծանօր. Կիլիկեան շրջանի Հայ գրչութեան գեղեցիկ գործերից մէկը իւր զրով, փառագրերով և պայծառ ու երփներանգ նկարչութեամբ։ Ոսկին գործադրուած է մեծ քանակութեամբ։ Մեր նկարը Զօնի մի երեսն է 14ա. (միշտ երկու երեսից բաղկացած և Կիլիկեան շրջանի փառազարդ ՁՁ-ում ընդհանրացած, յատկապէս Ռոսլինի դպրոցում). ոսկի մակերևութի վերայ, կարմիր տողերի մէջ, գիրը կապոյտ, սպիտակ գծիկով եղերուած։ Տարաբաղդաբար իսկականի չափը չունիմ նշանակած։

83. Մատ. Ներ. Ս. Յակոբ. № 2660/105, Աւետարան նկարազարդ։ Կազմն արծաթապատ, նոր. 22½×18½ սմ.։ Ընտիր մագաղաթ, 590 թերթ.։ ԳԻՐ. Մաքուր բոլորգիր, երկիջեան 16½×5½ սմ. ներքևի ծանօթութեան հետ։ ԳՐԻՉ. Աւետիս գրիչ և քահանայ աւետարանների համար. տ. 139, 224ա.։ Իսկ յիշատակարանի գրիչն է Թորոս Ռոսլին, նշանաւոր մանրանկարիչը այս և ուրիշ ձեռագիրների։ ՍՏԱՑՈՂ. «Ծիրանածին պարոն Լևոն», «իշխանաց իշխան», «որդի ք՞ սապսակ ս՞ը արքային Հեթմոյ». 288բ. ՏԵՂ. Յիշատակարանը, որից և մեր նկարը, գրուած է Հռոմկլայում. «Ընդ հովանեաւ ս՞ը և ա՞ծաբնակ տաճարացս, որ յանուն ս՞ը Փրկչին և սրբոյ Ա՞ծածնին և սրբոյն Գրիգորի լուսաւորչին մերոյ, և այլ ևս բազմահաւաք սրբոցս, որ պաշտին յաշխարհամուտ աթոռս Հռոմկլա»։ ԺԱՄԱՆԱԿ. 1262 թ. փրկչական. «յամի եւթն հարիւրերորդի տասն և մի երորդի թուաբերութեանս հայոց». «ի հայրապետութեանն տ՞ն Կոստանդեայ սրբազան կաթուղիկոսի Հայոց և ի բռնակալութեան ազգին Նետողաց, որք կոչին Դաղար»։

Ծանօր. Մանրանկարներից կարևորագոյնը Լևոն Գ-ի և իւր մատաղահաս թագուհու պատկերներն են, թագաժառանգ ժամանակ։ Աւետարանիչների պատկերները յետին գործ են, թղթի վերայ։ Առաջին կազմողը, գրութեան ժամանակից, եղել է Առաքել Հնազանդենց, որի անունը յաճախ յիշւում է ՁՁ-ի մէջ, իբրև նշանաւոր կազմարար։

Նկարուած է յիշատակարանից 285բ. Թորոս Ռոսլինի ձեռքը, մի ամբողջ երես. բնագիրը 16½×10½ սմ., մեր նկարը 12½×8,7 սմ.։

84. Մատ. Ս. Էջմ. № 928/823 (Կար. 908) Առ որս Աստուածաբանի. բուղթ, 16,8×12½ սմ. 172 թերթ։ ԳԻՐ Խոշորաձև բոլորգիր՝ մի իջեան 13,8×9,8 սմ.։ ԳՐԻՉ. Յովհաննէս սարկաւագ, որի ուսուցիչն է «վարդապետն տ՞ը Յովհաննէս» . . . որ սպանեալ եղև յանաւրինաց»։ Առաջին ուսուցիչն է «հայր Յակոբ»։ Գրչի ծնողներն են Շիրին և Սափիրա, եղբայրները Աւետշահ և Շահնշահ։ Գրչի առաջին գիրն է սա։ ՍՏԱՑՈՂ. Հաւանօրէն Յովհաննէս վարդապետ, գրչի ուսուցիչը, որովհետև գրուած է ի վայելումն «հոգևոր հաւր վարդապետին և ուսուցչին», անունը չնշուած։ ՏԵՂ. Եկեղեաց գաւառի Երզնկա քաղաքում, «Ընդ հովանեաւ ս՞ը Փրկչիս»։ ԺԱՄԱՆԱԿ. 1266 թ. փրկ-